ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

Լույսի մասին պատկերացումների առաջին հիշատակություններին մենք հանդիպում ենք խոր հնադարում՝ հին հույներից, եգիպտացիներից և հնդիկներից մեզ հասած ձեռագրերում: Նրանց պարզունակ պատկերացումները վերաբերում էին ինչպես լույսի բնույթին, այնպես էլ տեսողության էությանը: Այսպես՝ հույն փիլիսոփա Էմպեդոկլեսը (Ք.ա. 490–430 թթ.) զարգացնում էր հին հնդիկներից փոխառած այն գաղափարը, համաձայն որի՝ լույս արձակողը աչքն է. աչքից առաքված լույսը հասնելով շրջապատող առարկաներին՝ դրանք տեսանելի է դարձնում: Փիլիսոփա Պյութագորասը (Ք.ա. 580–500 թթ.) միանգամայն հակառակ կարծիքն ուներ. ոչ թե աչքը, այլ իրենք՝ մարմիններն են լույս արձակում, որն էլ ընկնելով մարդու կամ կենդանու աչքի մեջ առաջացնում է տեսողության երևույթը: Դիալեկտիկական մտածողության սովոր փիլիսոփա Պլատոնը (Ք. ա. 427–327 թթ.) հետագայում՝ նաև Պլատոնի հետևորդները, համադրելով այս իրարամերժ մոտեցումները, առաջադրում էին իրենց տեսակետը. լույս արձակում են թե՛ մարմինները, թե՛ տեսողության օրգանները, թե՛ Արեգակը: Այս, երեք աղբյուրներից եկող լույսերն էլ միաձուլվելով վերադառնում են կրկին աչք և ծնում տեսողության զգացողություն: Լույսի մասին առավել ռեալիստական պատկերացում ուներ Արիստոտելը (Ք. ա. 300–250 թթ.): Նրա կարծիքով լույսը որոշակի գրգիռ է, որը առարկաներից փոխանցվում է աչքին և հնարավոր դարձնում տեսողությունը:

Այս մտահայեցողական, պարզունակ մոտեցումների հետ միաժամանակ զարգանում էր նաև փորձնական ուսումնասիրությունը. Արիստոտելը, Էվկլիդեսը փորձնական ճանապարհով գտնում են լույսի ողղագիծ տարածման օրենքը, լուսային փնջերի անկախության՝ միմյանց միջով ազատ անցնելու հատկությունը, հաստատում լուսային ճառագայթների անդրադարձման և բեկման երևույթները: